զարաղիզն և որք կամակից եղեն յայսմ[1] բարեոյս. ո՞ր ա՞ծ վարս բարեաց պարգևեսցէ,[2] և որքան ի մարմնի են խաղաղ կենաց անփորձ

և ան

5 58. և անսասան[3] պահեսցէ և յետ աստեաց ելանելոյ զիւր երկնից արքայութե՞ արժանի արասցէ հանդերձ ծնողաց և ա՞մ ազգականաց արեան մերձաւորաց ամէն։ Այլ և[4] խնդրեմ և աղաչեմ զվերոյգրեալ օրհնեալ քահանայքդ և տանուտեարքդ, զի որքան ի 10 մարմնի էք զպայմանս զայս հաստատուն պահէք, որ զշահնային ժ՞ե դռ՞շէն յաւելի չի տայք առնել։ Եւ այլ ա՞մ արտօրեաք ֆարմանով է, ևս անուշուր է. որչափ կենդանի էք ջանացարուրք այս նոմոս անշարժ[5] պահեցէք[6] և յետ ձեր յետնամնացուած[7] ձերոց 15 պատուէր տաջիք, որ կրկին հաստատեսցեն։ Եւ թէ[8] ոք քահանայից կամ աշխարհականաց զայս պայմանս խախտեսցէ փոփոխելով կամ այլայլելով, ընդ ուղայի և ընդ խաչ հանողաց պատժեսցէ։ Եւ որք հաստատուն պահեսցեն, վարձս[9] յա՞յ

20 առ

59. առցեն և յերկնից արքայութե՞ արժանի[10] լիցին,[11] և ընդ ա՞մ ս՞բոց դասակից և պսակակից եղիցին. ամէն. եղիցի եղ՞ցի։

---

1 Զ. յասմ. ենթադրելի արտասանութիւն.
2 Զ. պարեւեսցէ. հմ. էջ 34-րդ ծան. 9
3 Զ. ան սասան
4 Զ. եւ տպմ.
5 Զ. ր տպմ.
6 Զ. եց տպմ.
7 թէ՞ յետնամանցուած. Զ. 2-րդ ն տպմ. ա-ի վրայ.
8 Զ. նխպ. եւ եթէ
9 Զ. ձ-ի տակ, տպմ. ց.
10 Զ. ի ն-ի վերև, տպմ.
11 Զ. ն նօտրգ. յետ. աւլ.